

Արձանագրություն թիվ 8

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

26 փետրվարի 2015թ.

ք.Բջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ա.Ռ.Մելքոնյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 15 անդամները: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2014-15ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփում:
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
2. 2014-15ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի հաստատում:
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
3. Ամբիոնի վարիչի տարեկան հաշվետվության ներկայացում:
/զեկ. Ա.Հ.Միրզոյան /
4. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, գիտական խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ ըստ հաստատված աշխատանքային պլանի հերթական նիստին նախատեսված էր երեք հարց, բայց կապված որոշ փոփոխությունների հետ ավելացրել ենք ևս մեկ հարց:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա մանրամասն ներկայացրեց քննություններից հետո, այնուհետև առաջին լուծարքային շրջանից և վերջում՝ երկրորդ լուծարքային շրջանից հետո արդյունքները /ուսանողների գնահատման ամփոփ տվյալները կցվում է արձանագրությանը/ և ցուցաբերած առաջադիմությունը՝ ըստ մասնագիտությունների, կուրսերի և ուսման կարգավիճակների: Մասնավորապես նշվեց, որ ստուգարքներից և քննություններից հետո <<Դիզայն>>, <<Կիրառական արվեստ>> առաջին կուրսերի, <<Կիրառական արվեստ>> երկրորդ կուրսի և մագիստրատուրայի երկրորդ կուրսի բոլոր ուսանողները 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակը հանձնել են առանց պարտքերի, իսկ <<Կիրառական արվեստ>> երրորդ կուրսի 29 ուսանողներից 13-ը ունեցել են ակադեմիական պարտքեր: Առաջին լուծարքային շրջանից հետո նրանց թիվը կազմում էր 7 ուսանող, երկրորդ լուծարքային շրջանից հետո 4 ուսանողներ կուտակել են ակադեմիական պարտքեր „Գծանկարչություն-5” մոդուլից /4 կրեդիտ/ Ասիլյան Հովսեփ, Արզումանյան Գագիկ, Մեջինյան Դավիթ և „Ինֆորմատիկա” /2 կրեդիտ/ Ստեփանյան Դերենիկ: Վերջիններս կիսամյակի սկզբից հաշված տասերորդ շաբաթվա ընթացքում /ապրիլի 13-18/ պետք է դիմեն պարտքերը վերահանձնելու խնդրանքով:

Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը 2014-15 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանից հետո կազմում է 94,44%:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Հ.Միրզոյանը, Դ.Զիբուխյանը: Նրանք մտահոգություն հայտնեցին վերոհիշյալ ուսանողների ոչ պատշաճ վերաբերմունքի և մասնագիտական ցածր որակների մասին և առաջարկեցին լրացուցիչ պարապմունքների միջոցով շտկել ստեղծված իրավիճակը՝ մինչև պարտքերի մարումը:

ՈՐՈՇԵՑԻՆ—1.Երրորդ կուրսի գերազանց և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին հանձնարարել նշված չորս ուսանողների հետ անցկացնել փոխօգնության դասեր:

2.Հանձնարարել „Գծանկարի, գունանկարի և քանդակի „ ամբիոնի վարչ Ա. Միրզոյանին վերոհիշյալ չորս ուսանողների հետ կցել ամբիոնի փորձառու դասախոս ` նրանց մասնագիտական որակների բարձրացման և անհրաժեշտ մակարդակի ապահովման նպատակով:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը և ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2014-15թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին և երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը և նշեց, որ վերջինս քննարկվել է նաև ուսանողների շրջանում: Անցկացվեց ընդհանուր քննարկում և առաջարկվեց հաստատել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Հ.Միրզոյանը, Մ.Մելքումյանը, Մ.Ստեփանյանը,Ա.Զիբուխյանը: Նրանք ի գիտություն ընդունեցին ներկայացված ժամանակացույցը և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2014-15թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին և երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը :

Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես եկան „Գծանկարի, գունանկարի և քանդակի „ ամբիոնի վարիչ Ա.Միրզոյանը:

Ա.Միրզոյանը մասնավորապես նշեց, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի „Գծանկարի, գունանկարի և քանդակի „ ամբիոնը ուղղորդվելով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2011-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցով 2014-2015թթ. ուստարում իրականացվել է հետևյալ միջոցառումները`

1. Քննարկվել և հաստատվել է „Գծանկարի, գունանկարի և քանդակի „ ամբիոնի 2014-2015թթ. ուստարվա աշխատանքային պլանները և դասավանդվող առարկայական ծրագրերը, ինչպես նաև գծանկարչություն, գունանկարչություն և քանդակագործություն առարկայական մոդուլների ընթացիկ,եզրափակիչ և հանրագումարային քննությունների գնահատման կարգերը:
2. Ամբիոնի բոլոր դասախոսները կազմել և քննարկել են առարկայական փաթեթներ / պորտֆոլիո/:
3. Քննարկվել է 2014-2015թթ. ուստարվա դասախոսների անհատական զարգացման աշխատանքային պլանը:
4. Հաստատվել է դասախոսների և ուսումնական խորհրդատուների ուսանողների հետ հանդիպման ժամանակացույցերը:
5. Քննարկվել և հաստատվել են 2014-15ուստարվա մագիստրատուրայի երկրորդ կուսի մագիստրոսական թեզերի թեմաները:
6. Կազմվել և հաստատվել են մագիստրատուրայի երկրորդ կուսի ուսանողների և ղեկավարների հանդիպման գրաֆիկները:
7. Կազմակերպվել են քննարկումներ մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված:
8. Քննարկվել և հաստատվել են փոխադարձ դասալսումների գրաֆիկները /առաջին և երկրորդ կիսամյակ/:
9. Քննարկվել և հաստատվել են 2014-15ուստարվա դասալսումների ժամանակացույցը:
10. Քննարկվել է անհատական և խմբային թեմատիկ ցուցահանդեսների կազմակերպման ժամանակացույցը:
11. Քննարկվել են գնահատման կարգի արդյունավետությանն ուղղված առաջարկությունները:
12. Ամբիոնը ապահովել է ամբիոնի առաջատար մասնագետների մասնակցությունը մարզի դպրոցներում կազմակերպվող մասնագիտական կողմնորոշմանն ուղղված գործընթացին:
13. Կազմակերպվել է 2014-15թթ. ուստարվա առաջին կիսամյակի ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների քննարկում և քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների և աջակցել կազմակերպում:

14. Ամբիոնը նպաստել է ուսուցման ժամանակակից մեթոդների ու տեխնոլոգիաների ներդրմանը և զարգացմանը:
15. Ամբիոնը հանրությանը անհրաժեշտ լրատվություն է տրամադրել մասնաճյուղի ինտերնետային կայքին, կատարել է բուկլետների ձևավորում՝ ֆակուլտետի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությամբ:
16. Ապահովել է հիմնական դասախոսական կազմի պարտադիր և լիարժեք մասնակցությունը որակավորման բարձրացման կրթական ծրագրերին:
17. Ամբիոնն ապահովել է ուսումնական և լաբորատոր տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման և կատարելագործման միջոցով:
18. Ամբիոնը պարբերաբար նախաձեռնել և իրականացրել է միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, ուսանողների, շրջանավարտների և այլ աջակցողների շնորհները և ներդրումային աշխատանքները լուսաբանելու և հանրությանը ներկայացնելու համար:
19. Կիսամյակի ընթացքում պարբերաբար կազմակերպել է պլեներային նկարչություն՝ դեպի պատմամշակութային կոթողներ:
20. Ամբիոնի դասախոսները իրենց մասնակցությունն են ունեցել ՀՀ ՆՄ-ան կազմակերպված ցուցահանդեսներին:
21. Քննարկվել և հաստատվել է ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունները:
22. Ուսումնասիրվել, քննարկվել և համապատասխան արձագանքի են արժանացրել ուսանողների առաջարկությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա.Մարգարյանը, Մ.Ստեփանյանը, Ա.Զիբուխյանը: Նրանք համակարծիք էին զեկուցողների հետ և առաջարկեցին վերջիններիս կատարած աշխատանքները գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ – „Գծանկարի, գունանկարի և քանդակի,, ամբիոնի կատարած աշխատանքները գնահատել բավարար:

Այնուհետև Ա.Մարգարյանը նշեց ,որը կապված մասնաճյուղի իրավաբանական կարգավիճակի փոփոխության հետ, փոխվել է նաև ֆակուլտետի գիտական խորհրդի

կազմը՝ ավելացնելով չորս անդամներով, որոնցից մեկը՝ ըստ ֆակուլտետի կանոնադրության պետք է լինի ուսանող/առաջարկվել է „Դիզայն„ առաջին կուրսի ավագ Մ.Շահինյանի/թեկնածությունը, իսկ մնացած երեքը՝ արտաքին շահակիցներ: Առաջարկեցին՝ Կարո Հայկազի Ղուլիջանյանի - Նոյեմբերյան քաղաքի արվեստի դպրոցի տնօրեն, Համլետ Խաչատուրի Մխիթարյանի – Իջևան քաղաքի արվեստի դպրոցի տնօրեն, Սամվել Հովհաննեսի Մելքումյանի - Իջևան քաղաքի պատկերասրահի տնօրեն թեկնածությունները՝ հաշվի առնելով նրանց հարուստ փորձը, մասնագիտական բարձր որակները: Նրանք ավելի են տեղեկացված ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին և մարտավարական արտաքին խնդիրներ քննարկելիս արժեքավոր տեղեկություններ կարող են տրամադրել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ– Ա.Հ.Միրզոյանը, Ս.Հովհաննիսյանը, Մ.Մելքումյանը, Մ.Ստեփանյանը, Ա.Զիբուխյանը և կարևորեցին արտաքին շահակիցների մասնակցությունը ֆակուլտետի գիտական խորհրդի աշխատանքներին, քանզի այտեղ են քննարկվում որակյալ մասնագետներ պատրաստելու համար անհրաժեշտ խնդիրները:

ՈՐՈՇԵՑԻՆ– Ֆակուլտետի գիտական խորհրդի նորացված կազմը ներկայացնել տնօրենին՝ հաստատելու այն:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա.Ռ.Մելքումյան